ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2026/1

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«27» փետրվարի 2026 թվական քաղաք Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով Տաթև Ասրյանի, Տիգրան Ծատուրյանի և Նուշիկ Պետրոսյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման Հավելվածի 11-րդ կետով, ***որոշեց.***

1. հաստատել կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի մասին հայտարարությունը՝ համաձայն Հավելվածի:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Տաթև Ասրյան

Հավելված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սույն Հայտարարությունը հաստատված է Մրցութային հանձնաժողովի «2026/1» որոշմամբ

Բաց մրցույթի ծածկագրերը՝ ԿՏՀԲՄԾ-2026/1 և ԿՏՀԲՄԾ-2026/2

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության,
2. «Առաջ աջակենտրոն» կուսակցության,

2025 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 3-ով:

Մրցույթին մասնակցելու սահմանափակումները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 4-ով:

Մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը, ներկայացման ժամկետը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 6-ով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 2-ով:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 10-ով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր: Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքը կազմում է՝

N	**Մրցույթի ծածկագիր**	**Կուսակցության անվանում**	**Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)**
1	ԿՏՀԲՄԾ-2026/1	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	8,340,000
2	ԿՏՀԲՄԾ-2026/2	«Առաջ աջակենտրոն» կուսակցություն	1,710,000

Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 5-ով:

Սույն հայտարարությունը կազմվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածի, Որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեով, թղթային ձևով, մինչև ***2026 թվականի մարտի 16-ը ներառյալ՝ ժամը 11:00-ն:***

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերենով:

Մրցութային առաջարկների բացումը տեղի կունենա ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեում, ***2026 թվականի մարտի 16-ին՝ ժամը 11:00-ին:***

Աուդիտորական ծառայությունները պետք է մատուցվեն, իսկ աուդիտորական եզրակացությունը պետք է ներկայացվի մինչև սույն թվականի ***ապրիլի 30-ը***:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Տաթև Ասրյան

Մրցութային հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Ծատուրյան

Նուշիկ Պետրոսյան